ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ ՎԱՆԻԿԻ

1903 Թ. ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՕՐԵՆՔԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱԿԱՑԱՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ 1903-1905 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ներսիսյան Աշոտ Արտաշեսի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Ստեփանյանց Ստեփան Միհրանի

պատմական գիտությունների թեկնածու
Վարդանյան Թամարա Ռազմիկի

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. դեկտեմբերի 16-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. հոկտեմբերի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ռուսաստանն Արևելյան Հայաստանի մի խոշոր հատված նվաճելուց հետո այդ տարածքում հայ ժողովրդի նկատմամբ վարել է գաղութային քաղաքականություն՝ ամենատարբեր դրսևորումներով: Այդ քաղաքականությունն առավել ցայտուն դարձավ Հայոց եկեղեցու կալվածքների և գույքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքով:

Հայոց եկեղեցին, ազգային կուսակցությունները, հայ սոցիալ-դեմոկրատները, գաղթօջախների հայությունը ցուցաբերեցին բացառիկ համախմբվածություն՝ հունիսի 12-ի օրենքի չեղարկման համար պայքարում:

Թեմայի արդիականությունն այն է, որ մեր օրերում, երբ հայ ժողովրդի առջև ծառացած են բազմաթիվ լուրջ խնդիրներ, առաջին հերթին՝ արցախյան հիմնախնդիրը, XX դարասկզբին հունիսի 12-ի օրենքի դեմ պայքարի օրինակը կարող է լավագույն ուղենիշներից մեկը լինել հայ ժողովրդի համար: Հայ ժողովրդի պատմության այդ փառավոր էջը ցույց է տալիս, որ չունենալով պետականություն, հայությունը կարողացավ ցույց տալ թե՛ ռուսական պետությանը, թե՛ ամբողջ աշխարհին, որ պատրաստ է համախամբված պայքարել իր ազգային իրավունքների դեմ ուղղված ոտնձգության դեմ: Մեր ժողովրդի հաջողված պայքարի այդ օրինակն աչքի առաջ ունենալով, հայ քաղաքական ուժերը, եկեղեցին, աշխարհասփյուռ հայությունը, պետք կարողանան մի կողմ դնել գաղափարական հակասությունները և միավորվեն համազգային խնդիրներին միասնական ջանքերով լուծում տալու համար: Այսինքն, թեմայի արդիականությունը նախ և առաջ միասնականությամբ հաղթելու հնարավորության խորհրդի մեջ է: Թեման արդիական է նաև հայ-ռուսական մերօրյա հարաբերությունների առումով: Նախորդ դարասկզբին Ռուսաստանի՝ հայ ժողովրդի հանդեպ վարվող հայաձուլման քաղաքականությունն ապացուցեց, որ իր շահերն առաջ տանելու համար Ռուսաստանը ոչնչի առջև կանգ չառավ: Ասվածն այսօրվա համար էլ է կարևոր, որ չնայած Ռուսաստանի՝ մեր կողմից բարեկամ լինելու ընկալմանը, նա վերջին արցախյան պատերազմում առաջնորդվեց նախ և առաջ իր քաղաքական նպատակադրումներով: Ուրեմն քաղաքականության մեջ պետք չէ վստահել որևէ գործընկեր երկրի, այլ գործել սառը հաշվարկով:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է վեր հանել 1903 թ. հունիսի 12-ի օրենքի չեղարկման համար հայ ժողովրդի մղած պայքարն ու անաչառ քննության ենթարկել հայ ժողովրդի՝ հակացարական պայքարի մեջ մտնելու պատճառներն ու այդ պայքարի ընթացքը: Դրա համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ներկայացնել 1903 թ. հունիսի 12-ի օրենքին նախորդած շրջանում ցարական իշխանությունների՝ հայ ժողովրդի հանդեպ տարվող քաղաքականությունը և բացահայտել օրենքի ընդունման պատճառները:
2. Պարզաբանել հունիսի 12-ի օրենքի բովանդակությունը, լուսաբանել վերջինիս անմիջական արձագանքները հայության շրջանում:
3. Քննության առնել օրենքի նկատմամբ Հայոց եկեղեցու և հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը և հակացարական պայքարում նրանց դերակատարությունը:
4. Ներկայացնել հակացարական ելույթներն Արևելյան Հայաստանում և Կովկասում:

5. Ցույց տալ դիմադրության այլ ձևերի կիրառումը 1903-1905 թթ. և օրենքի ունեցած տնտեսական հետևանքները:

6. Ներկայացնել 1905 թ. օգոստոսի 1-ի ցարական նոր հրամանագիրը և քննության ենթարկել դրա ընդունման պատճառները:

7. Պարզաբանել օրենքի արտացոլումը հայ մամուլի էջերում և գաղթօջախների հայության դիրքորոշումն օրենքի հարցում:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմահամեմատական և պատմաքննական մեթոդով, արխիվային փաստաթղթերի, հրատարակված սկզբնաղբյուրների, մամուլից քաղված նյութերի, ուսումնասիրությունների համադրման և վերլուծության սկզբունքով:

Եզրահանգումները կատարվել են փաստական նյութի հիման վրա, որոնց մի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակը: Ժամանակագրական առումով ատենախոսությունը գլխավորապես ընդգրկում է 1903-1905 թթ.՝ ներկայացնելով 1903 թ. հունիսի 12-ի օրենքի ընդունումից մինչև այն չեղարկելու վերաբերյալ 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագրի ստորագրումը: Բայց, ելնելով ուսումնասիրվող հիմնախնդիրն ամբողջության մեջ դիտարկելու անհրաժեշտությունից, ժամանակագրական շրջանակն առաջին գլխում ընդարձակել ենք՝ համառոտ ներկայացնելով նաև արևելահայության հանդեպ Ռուսաստանի վարած քաղաքականությունը XIX դարի 80-90-ական թթ.:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Հետխորհրդային հայ պատմագրության համար կարևոր է հայ ժողովրդի ոչ հեռավոր անցյալի պատմության այդ շրջանի նորովի ու անաչառ լուսաբանումը: Ատենախոսությունն այդ առումով հետազոտվող հիմնահարցի համակողմանի, անաչառ և նորովի ուսումնասիրման փորձ է: Հիմնահարցն ուսումնասիրվել է բազմակողմանիորեն՝ հաշվի առնելով պատմագրության մեջ ցայսօր եղած տարբեր վերլուծություններն ու գնահատականները՝ զերծ քաղաքական ներկա և նախկին շահերով պայմանավորված մոտեցումներից: Մինչ օրս եղած ուսումնասիրությունների մեջ բացակայում է հիմնահարցը համակողմանի ներկայացնող ամբողջական մենագրություն: Այդ առումով մեր ուսումնասիրությունն առաջին փորձն է: Ատենախոսության գիտական նորույթը նաև հետևյալն է. Ցարական Ռուսաստանը, որ դարեր շարունակ հայ քաղաքական մտքի ընկալումներում եղել է մեր քրիստոնյա դաշնակիցը, իր ներքին անվտանգության շահերից ելնելով փորձել է չեզոքացնել քրիստոնյա փոքրամասնությունների ինքնուրույնությանը նպաստող ամեն մի շարժում և կառույց, որը մեզ համար պետք է լինի քաղաքական դաս: Հայտնի և նորահայտ փաստերի համադրական քննության միջոցով մատուցել ենք այն պատմագիտական նոր հայեցակարգը, որ քաղաքական գործընթացներում երկրորդական են խաղաղ ցույցերն ու բողոքները: Քաղաքական հաջողությունների հասնելու գրավականը գլխավորապես ուժն է: Սա անհերքելի է:

Ատենախոսությունն ունի նաև ճանաչողական, քաղաքական և գործնական նշանակություն: 1903 թ. հունիսի 12-ի օրենքի չեղարկման համար պայքարն ուղենիշ կարող է դառնալ ներկա սերունդների դաստիարակության համար որպես պատմական հաջողված նախադեպ, թե ինչպես էին XX դարասկզբին իրենց նախնիները, չունենալով

պետականություն, պայքարում ազգային շահերի պաշտպանության համար և հասնում հաջողության:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Հիմնահարցը վերուծելիս հիմնականում օգտագործել ենք Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) պահվող ֆոնդերի փաստաթղթերը: Հատկապես կարևորվել է ՀԱԱ-ում պահվող Երևանի նահանգապետարանի և Երևանի նահանգապետի գրասենյակի ֆոնդը[1]: Նշանակալից է Սուրբ Էջմիածնի Լուսավորչական Հայոց Սինոդի ֆոնդը[2]: Կարևոր է Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանի ֆոնդը, որը հնարավորություն է տալիս ներկայացնել Մ. Խրիմյանի կողմից հունիսի 12-ի օրենքի կապակցությամբ Նիկոլայ Երկրորդին, Երևանի նահանգապետարանին և ցարական տարաբնույթ պաշտոնյաներին ու աշխարհասփյուռ հայկական համայնքներ ուղղած գրություններն ու խնդրագրերը[3]: Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինի դեմ կազմակերպված մահափորձի վերաբերյալ ուշագրավ վավերագրեր կան Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության փաստաթղթերի հավաքածու ֆոնդում[4]:

Ուշագրավ վավերագրեր են ներառված ՀԱԱ-ի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան փաստաթղթերն ամփոփող ֆոնդում[5]: Կաթողիկոս Մ. Խրիմյանի՝ հայտնի աշխարհագետ Բ. Լինչին ուղղած անձնական նամակագրության վավերագրերն ուսումնասիրել ենք, օգտագործելով Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (այսուհետ՝ ԳԱԹ) արխիվի Մկրտիչ Խրիմյանի ֆոնդը[6]: Կարևոր են Մատենադարանում գտնվող Երուսաղեմի հայոց աքսորական պատրիարք Մաթևոս Իզմիրլյանի արխիվում ամփոփված վավերագրերը[7]: Հիմնախնդրի ուսումնասիրման համար կարևոր են նաև հրապարակի վրա առկա հայերեն և օտարալեզու փաստաթղթերի ժողովածուները: «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» ժողովածուի Բ հատորում առկա վավերագրերը ներկայացնում են հակացարական պայքարի ամենաակտիվ քաղաքական ուժի մոտեցումները հիմնախնդրի վերաբերյալ[8]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, Երևանի նահանգային վարչություն և Երևանի նահանգապետի գրասենյակ, ց. 9, գ. 58, թ. 1-4, թ. 71:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 56, Սուրբ Էջմիածնի Լուսավորչական Սինոդ, ց. 16, գ. 333, թ. 6-7, թ. 24, թ. 36, թ. 39, թ. 81-83, թ. 169, գ 347, թ. 199-200, թ. 280, գ. 349, թ. 3, թ. 4, թ. 6, թ. 8, թ. 10-13, թ. 19, թ. 21, թ. 23, թ. 49, թ. 81-89:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 57, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան, ց. 3, գ. 34, թ. 63-64, ց. 12, գ. 87, թ. 110, թ. 111-113, թ. 115-117:

[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1456, Հայկական սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության փաստաթղթերի հավաքածու, ց. 2, գ. 24, թ. 1-13:

[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1457, Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցություն, ց. 1, գ. 10, թ. 1, գ. 12, թ. 1, գ. 13, թ. 6, գ. 27, ց. 3, գ. 2, թ. 1249-1250, գ. 4, թ. 2660, 2674-2675, 2974-2975, 3423-3424:

[6] Տե՛ս Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետ՝ ԳԱԹ), Մկրտիչ Խրիմյանի ֆոնդ, բաժին II, վավերագիր N 5, թ. 1-4:

[7] Տե՛ս Մատենադարան, Մատթէոս Բ կաթողիկոս Իզմիրլեանի արխիվ, թղթ. 13, վավ. 388, I, II, III:

[8] Տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետ՝ Նիւթեր…), հ. բ., բ հրատ. Պէյրութ, տպ. Համազգայինի, 1985:

Խորհրդային շրջանում հրատարակված «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ» ժողովածուի մեջ զետեղված նյութերը օգնում են պարզաբանել հունիսի 12-ի օրենքի հանդեպ սոցիալ-դեմոկրատների ունեցած մոտեցումները[1]:

Հրամանագրի չեղարկումն ու նրա ընդունման անարդյունավետությունը բացահայտող կարևոր վավերագիր է սենատոր Ա. Կուզմինսկու՝ Նիկոլայ Երկրորդին ուղղած հաշվետվությունը[2]: 1903 թ. հունիսի 12-ի օրենքի բեկանման պատճառները բացահայտող կարևոր տպագիր վավերագիր է Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի՝ Նիկոլայ Երկրորդին ուղղած զեկուցագիրը[3]:

Հիմնախնդրի լուսաբանման համար օգտագործվել են այդ ժամանակաընթացքում գործունեություն ծավալած գործիչների հուշագրությունները: Ցարական արքունիքում հունիսի 12-ի օրենքի ընդունմանը նախորդած քննարկումները, սեփական դիրքորոշումը, եղած տարակարծություններն իրատեսորեն է մեկնաբանում այդ ժամանակ Ռուսաստանի ֆինանսների նախարար Ս. Վիտտեն իր հուշագրության 2-րդ հատորում[4]: Իր հուշագրությունում թեմային անդրադարձ է կատարել նաև Լենոն[5]:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքի կարևորագույն շերտ են ներկայացնում նաև ժամանակի թերթերն ու ամսագրերը: Այդ շարքում կարևորվում են ինչպես հայկական («Մշակ», «Դրօշակ», «Հայրենիք», «Մուրճ», «Նոր-դար», «Հնչակ», «Բիւզանդիոն», «Մասիս», «Արևելք», «Ժողովուրդ», «Անահիտ», «Վերածնություն», «Լումայ»), այնպես էլ ռուսական լրագրերը («Кавказъ», «Армянскій Вьстникь», «Новое обозрьніе»):

Թեմայի ուսումնասիրման համար օգտագործվել են նաև ինչպես ժամանակի հետազոտողների, հասարակական ու կուսակցական գործիչների, այնպես էլ խորհրդային և հետխորհրդային շրջանի հետազոտողների աշխատություններում տեղ գտած՝ հիմնահարցին առնչվող վերլուծությունները: Նախկինում կատարված հետազոտությունները շոշափել են հիմնահարցը տարբեր կողմերից: Հիմնահարցին անդրադարձ է կատարվել կա՛մ հայ դպրոցի պատմության համատեքստում, կա՛մ Մ. Խրիմյան կաթողիկոսի գործունեության համատեքստում, կա՛մ ռուսական 1905-1907 թթ. առաջին հեղափոխության համատեքստում, կա՛մ հայ քաղաքական կուսակցությունների՝ XX դարասկզբի գործունեությունը լուսաբանելիս, կամ էլ Արևելյան Հայաստանը XX դարասկզբին ներկայացնելու համատեքստում՝ յուրաքանչյուր դեպքում մատուցելով պատմագիտական նոր հայեցակարգեր:

Թեմայի լուսաբանումը թերի կլիներ առանց Է. Ակնունու (Խաչատուր Մալումյան) աշխատությունների: Նախ Է. Ակնունու կողմից հրատարակված հոդվածների առաջին

---

[1] Տե՛ս Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ, Ե., Հայպետհրատ, 1960:

[2] См. Всеподданньйшій отчет о произведенной вь 1905 году по Высачайшему повельнію, сенаторомь Кузминским ревизіи города Баку и Бакинской губернии (այսուհետ Всепод. отчет…).

[3] См. Всеподданньйшая записка по управлению Кавказским краемь генерал-адьютанта графа Воронцова-Дашкова, СПБ, Государственная Типографія, 1907 (այսուհետ Всепод. записка…).

[4] См. Витте С. Ю., Воспоминания, т. 2, Москва, соцэкгиз, 1960.

[5] Տե՛ս Լեն, Անցյալից, Ե., Շեմ հրատ., 2009:

ժողովածուն, որը կազմված էր «Դրօշակ»-ում մինչ այդ տպագրած հոդվածներից[1]: Ավելի ուշ հրատարակվում է Է. Ակնունու՝ «Դրօշակ»-ում հունիսի 12-ի օրենքի ընդունումից հետո տպագրված հոդվածների ժողովածուն[2]: Լինելով իրադարձությունների ժամանակակից, Է. Ակնունին բավական իրատեսորեն է ներկայացնում թե՛ հունիսի 12-ի օրենքը, թե՛ ցարական կառավարության քաղաքականությունը, թե՛ Ինքնապաշտպանության կոմիտեի գործունեությունը և թե՛ հակացարական ելույթները, ապա նաև ցարական պաշտոնյաների ահաբեկումները: Է. Ակնունու հրապարակումներին վերապահումով պետք է մոտենալ միայն այն հարցում, որ նա, լինելով դաշնակցական, որոշ դեպքերում խնդրին մոտենում է կուսակցական տեսանկյունից: Մասնավորապես Ինքնապաշտպանության կոմիտեի սաղմնավորման մասին Է. Ակնունին գրում է. «Պրօպագանդի բերան հանդիսացաւ մի յատուկ մարմին - «Հայկական ինքնապաշտպանութեան կենտրօնական կօմիտէն», կազմւած «Դաշնակցական» մարմինների նախաձեռնութեամբ»[3], մինչդեռ պատմական փաստերն ապացուցում են, որ Ինքնապաշտպանության կոմիտեն ոչ միայն քարոզչական գործունեությամբ էր զբաղված, այլ նաև կազմակերպում և համակարգում էր հայ ժողովրդի հակացարական պայքարը[4]:

1903 թ. հունիսի 12-ի օրենքին, դեպքերի թարմ տպավորությամբ, առաջիններից մեկն անդրադարձել է Ա. Ջիվելեգովը[5]: Նա հունիսի 12-ի օրենքի ընդունման գլխավոր պատճառ էր տեսնում կառավարության՝ հայերի հանդեպ տածած անվստահությունը և հայ ժողովրդի ինքնուրույնության աճից ունեցած վախը[6]: Գ. Չալխուշյանը, լինելով իրադարձությունների ժամանակակից, իր աշխատությունում[7] անդրադարձել է նաև հունիսի 12-ի օրենքի ընդունմանը, բնութագրել վերջինիս էությունը, մատնանշելով, որ դրանով Հայոց եկեղեցին զրկվում էր իր եկամուտներից և իր գույքից ու կապիտալից ստացած տոկոսներից, դրանց տնօրինման իրավունքից, բայց պահպանում էր սեփականության իրավունքը՝ օրիգինալ իրավունք առանց որևէ իրավունքի[8]:

Հայ սոցիալ-դեմոկրատների վերաբերմունքը լուսաբանել ենք, օգտագործելով «Искра» թերթում 1903 թ. հոկտեմբերի 1-ին հայտնի սոցիալ-դեմոկրատ Բոգդան Կնունյանցի տպագրած «Նոր թալան» կամ «Նոր կողոպուտ» հոդվածը[9]:

Կարևոր է նաև Ստեփան Շահումյանի, որպես հայ սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների հավաքական տեսակետների արտահայտիչ, հիմնահարցին նվիրված վերլուծությունը[10]:

---

[1] Տե՛ս Ակնունի Է., Կովկասեան վէրքեր, «Դրօշակի» տպարան, Ժընեվ, 1903:

[2] Տե՛ս նույնը, Դէպի կռիւ, «Դրօշակի» տպարան, Ժընեվ, 1904:

[3] Նույն տեղում, էջ 193:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 200-250:

[5] См. Дживелеговь А. К., Армяне вь Россіи, Москва, Трудь и воля, 1906.

[6] Там же, с. 30.

[7] См. Чалхушьян Г., Армянскій вопрось вь Россіи, Ростовь на Дону, Электропеч. А. Тер Абрамиан, 1905.

[8] Там же, с. 16.

[9] Տե՛ս Կնունյանց Բ., Ընտիր երկեր, Ե., «Հայաստան» հրատ., 1978:

[10] Տե՛ս Շահումյան Ստ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 1-ին (1902-1907), Ե., «Հայաստան» հրատ., 1975, էջ 51-55:

Հիմնախնդրի վերլուծման համար օգտագործվել է հունիսի 12-ի հրամանագրի ընդունման և կիրառման ժամանակահատվածում Թիֆլիսում հրատարակվող «Кавказъ» լրագրի խմբագիր Վ. Վելիչկոյի մենագրությունը[1]: «Հունիսի 12-ի օրենքի ընդունումն առավել քան անհրաժեշտ էր,- գրում է նա,- այն ավելի շատ ուշացած միջոց էր, քան վաղաժամ: Ամեն բաց թողնված տարին լի էր նոր բարդություններով, քանզի հայկական հեղափոխական կազմակերպությունը խորությամբ և տարածքով ընդլայնվեց»[2]: Վ. Վելիչկոն ամեն հայկականի մեջ տեսնում էր միայն բացասականը: Հիմնախնդրի անաչառ վերլուլուծության համար կարևորել ենք Վ. Վելիչկոյից անհամեմատ առաջադեմ ռուս պատմաբան Ս. Լյուբոշի մենագրությունը[3]: Նա քննադատում է գոլիցինյան ռեժիմը. «Գոլիցինը, ցարական բարեհաճությամբ, գնաց այն քայլին, ինչին երբեք չէին համարձակվել դիպչել ո՛չ թուրքերը, ո՛չ պարսիկները: Նա իր ոստիկանական թաթը դրեց հայկական եկեղեցապատկան գույքի վրա: Միայն ուղղափառ ռուս ցարը, «քրիստոնյաների պաշտպանը», թույլ տվեց իր ճորտին (Գ. Գոլիցինին-Մ.Դ.) այդպես կոպտորեն մխրճվել այդ դաշտը»[4]: Դրանով հանդերձ Ս. Լյուբոշն ակնարկում է, որ կարելի էր «ճիշտ» քաղաքականություն վարել. հրահրել ազգամիջյան բախումներ, այլ ոչ թե գնալ գույքի բռնագրավմանը և այդ ճանապարհով կովկասյան բոլոր ազգերին տրամադրել իշխանությունների դեմ: «Վրացիների և հայերի, հայերի և մուսուլմանների մեջ առկա սուր ազգային թշնամանքը, կորցրեց իր սրությունը,- գրում է նա,- քանզի բոլորին, նույնիսկ ռուսներից շատերին, միավորեց ցարական սատրապի (Գ. Գոլիցինի-Մ.Դ) դեմ տածած համընդհանուր ատելությունը»[5]:

1903 թ. հունիսի 12-ի օրենքին, դեպքերի թարմ տպավորությամբ, առաջիններից մեկն անդրադարձել է ֆրանսիացի պատմաբան Վ. Բերարդը: Նա իր աշխատության մեջ անդրադարձել է ինչպես XIX դարավերջի հայկական դպրոցների, գրադարանների, բարեգործական հիմնադրամների փակման խնդրին, այնպես էլ հունիսի 12-ի հրամանագրին[6]: Իր աշխատության մեջ Վ. Բերարդը մեջբերում է նաև կաթողիկոս Մ. Խրիմյանի՝ 1903 թ. դեկտեմբերի 12-ին, Նիկոլայ 2-րդին ուղղված խնդրագիրը[7]: Հիմնախնդրին անդրադարձել է նաև ժամանակի ռուս գրող, հասարակական ակտիվ գործիչ Մ. Գորկին: Նա XIX դարավերջի և XX դարասկզբի հայ ժողովրդի կրած բազում զրկանքների շարքին էր դասում նաև ռուսական ինքնակալության կողմից հայոց եկեղեցապատկան գույքի բռնագրավումը[8]:

Հիմնախնդրի լուսաբանման համար օգտագործվել են Մխիթար Վարդապետի աշխատության մեջ բերված վիճակագրական տվյալները [9]:

---

[1] Տե՛ս Величко В. Л., Кавказ, Русское дело и межуплеменные вопросы, Москва, ФЭРИ - В, 2003.
[2] Там же, с. 127-128.
[3] Любош С., Последние Романовы, книгоиздательство Петроград, Москва, 1924.
[4] Там же, с. 198-199.
[5] Там же, с. 198.
[6] Տե՛ս Berard V., L' Empire Russe et le Tsarizm, Paris, Colin, 1905.
[7] Տե՛ս նույն տեղում, էջ 258-259:
[8] Горький и Армения, Очерки, статьи и высказыванния М. Горького, изд-во Митк, Е., 1968., с. 41.
[9] Տե՛ս Մխիթար Վարդապետ, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, տպ. ս. Էջմիածնի, 1906:

1836 թ. եկեղեցական կանոնադրության ներկայացման տեսանկյունից մեծարժեք է Ներսես արք. Մելիք-Թանգյանի աշխատությունը[1]:

Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանն իր ուսումնասիրության երրորդ հատորում[2] ներկայացնում է ցարական կառավարության՝ հունիսի 12-ի օրենքին նախորդած քաղաքականությունը, բուն օրենքը և 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագիրը: Մ. Օրմանյանի աշխատության մեջ հատկապես կարևորում ենք նրա՝ որպես Կ.Պոլսի պատրիարքի և կաթողիկոս Մ. Խրիմյանի միջև եղած նամակագրությունը[3]:

Եկեղեցական գործիչներից հիմնախնդրին անդրադարձել է նաև Եղիշե ավագ քահանա Գեղամյանցը՝ «Հովիվ» շաբաթաթերթում տպված իր հոդվածների հիման վրա տպագրված գրքում[4]: Ե. Գեղամյանցը գրում է. «Իշխան Գօլիցինը պարզ ասել էր, որ նա հայութիւնը պիտի ջնջէ եւ միմիայն մի հայ տղամարդու եւ մի կինարմատի խրտուիլակները պիտի թողնէ կովկասեան հնութեան թանգարանում ի տես և ի ցոյց ապագայ սերնդին»[5]:

Հունիսի 12-ի օրենքի հանդեպ ՀՅԴ-ի որդեգրած դիրքորոշումը ներկայացնելիս օգտագործվել է Դաշնակցության պատմաբան Մ. Վարանդյանի ՀՅԴ-ի պատմությանը նվիրված աշխատությունը[6], որում հեղինակը տալիս է ռուսական կառավարության վարած քաղաքականության հիմնական նպատակը. «Պատճառները խոր էին և կուգային հեռուէն: Ցարերու ընդհանուր քաղաքականութեան մէջ էին անոնք: Այդ քաղաքականութիւնը մէկ բառով կը ձևակերպուէր- ռուսացում»[7]: Մ. Վարանդյանն, իր ավելի վաղ շրջանում գրած մեկ այլ աշխատության մեջ հիմնավորում է ՀՅԴ-ի՝ հակացարական պայքարում ներգրավվելու պատճառը[8]: «Հարուածը տեղում էր ազգային խղճուկ ինքնուրոյնութեան վերջին մնացորդներին,- գրում է նա,- ահա թէ ինչու հայ մարտական կազմակերպութիւնը որոշեց խզել երկար տարիների իր ձեռնպահութիւնը և ժողովրդի հետ գրկախառնուած՝ նետուեց կռի դաշտ »[9]:

Հիմնախնդրի լուսաբանմանը կարևոր տեղ է հատկացրել Դ. Անանունը՝ իր մենագրության երկրորդ և երրորդ հատորներում[10]: Դ. Անանունն իրատեսորեն է գնահատում ցարիզմի քաղաքականությունը: «Հայոց դպրոցին եղած հալածանքն ընդհանրապէս հայ լեզուի և ինքնուրոյնութեան դէմ մղուած պատերազմի ճակատներից մէկն էր և գլխաւորը,- գրում է նա,-

---

[1] Տե՛ս Ներսէս արք. Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրաւունքը, Էջմիածին, Ս. Էջմիածին, 2011:

[2] Տե՛ս Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Գ, Էջմիածին, մայր աթոռ Ս. Էջմիածին, 2001:

[3] Տե՛ս նույն տեղում, սյունակ 5568-5572:

[4] Տե՛ս Գեղամեանց ա. ք. Ե., Ռուս բիւրոկրատիան եւ հայերը, Բագու, տպ. «Վէրա», 1917:

[5] Նույն տեղում, էջ 74:

[6] Տե՛ս Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ե., Երևանի Համալսարանի հրատարակչություն, 1992:

[7] Նույն տեղում, էջ 272:

[8] Տե՛ս Յովհաննիսեան Մ., Դաշնակցութիւնը եւ նրա հակառակորդները, Թիֆլիս, 1906:

[9] Նույն տեղում, էջ 13:

[10] Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հատոր երկրորդ, հրատարակութիւն էջմիածնի գիտական ինստիտուտի, Էջմիածին, 1922, հատոր երրորդ (1901-1918), Վենետիկ, տպարան Ս. Ղազարու, 1926:

Երկրորդական ճակատներում կոխկրտում էին բարեգործական-լուսաւորական ընկերութիւնները, ճնշում էր մամուլը և խղճի ազատութիւնը»[1]:

Հիմնախնդրին իր աշխատությունում անդրադարձել է Գ. Լազյանը[2]:

Հնչակյան կուսակցության՝ հրամանագրի չեղարկան համար պայքարը վերլուծելիս օգտագործել ենք Ա. Կիտուրի խմբագրած փաստաթղթերի ժողովածույում առկա որոշ նյութեր[3]:

Այժմ անդրադառնանք խորհրդային ժամանակաշրջանում տարբեր տարիներին հրապարակված որոշ հետազոտողների ուսումնասիրություններին ու հոդվածներին: Կարևոր են Հայ ժողովրդի պատմություն բազմահատորյակի վեցերորդ հատորում հիմնահարցին նվիրված վերլուծությունները[4]:

Չնայած հատորում հայ ժողովրդի հակացարական ելույթները դիտարկվում են դասակարգային պայքարի տեսանկյունից, ինչը ճիշտ չէ, դրանում իրատեսորեն է գնահատվում այդ պայքարը. «Դա ցարիզմի ռեակցիոն քաղաքականության դեմ հայ ժողովրդի դժգոհության պոռթկումն էր: Այն իր բովանդակությամբ, իր բնույթով ազգային-ազատագրական շարժում էր ընդդեմ ցարիզմի քաղաքականության»[5]:

Խորհրդահայ հետազոտողների գնահատականները հիմնականում տեղավորվում են սոցիալ-դեմոկրատներին՝ որպես հունիսի 12-ի օրենքի դեմ ծավալած պայքարում առաջամարտիկ ներկայացնելու և հակացարական պայքարը որպես դասակարգային պայքար ներկայացնելու ոչ ճիշտ մոտեցման շրջանակում[6]: Հիմնահարցի ամբողջական ներկայացման տեսանկյունից արժեքավոր է Վ. Երկանյանի մենագրությունը[7]: Նա մանրամասն անդրադարձել է նաև հայ ժողովրդի հակացարական պայքարին՝ իր ամենատարբեր դրսևորումներով: Նա հունիսի 12-ի օրենքը գնահատում է որպես ցարիզմի՝ հայ ազգային մշակույթի, մայրենի լեզվի ու մշակութային օջախների դեմ անընդհատ սաստկացող հալածանքի, բայց որպես օրենքի ընդունման գլխավոր պատճառ տեսնում է հայկական դպրոցների փակումը. «Ըստ էության,- գրում է Վ. Երկանյանը,- օրենքը հատկապես հայկական դպրոցների դեմ ցարիզմի վարած քաղաքականության տրամաբանական

---

[1] Տե՛ս նույն տեղում, հատոր երկրորդ, էջ 162:

[2] Տե՛ս Լազեան Գ., Հայաստան և հայ դատը, Գահիրէ, 1946:

[3] Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962), խմբ. Ա. Կիտուրի, հ. Ա, Պէյրութ, տպ. Շիրակ, 1962, 616 էջ:

[4] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. VI, Ե., 1981:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 356:

[6] Տե՛ս Մելիք-Յոլչյան Յ., Հայաստանի բանվորական շարժման պատմությունից 1903-1907, Ե., Պետհրատ, 1930, էջ 49-53, Հարությունյան Գ., Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907 թթ., Ե., Հայպետհրատ, 1956, էջ 42-47, Իսահակյան Հ., Լենինյան «Իսկրան» և ռևոլյուցիոն շարժման վերելքը Անդրկովկասում, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1963, էջ 146-163, Մուրադյան Դ., Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, Ե., 1964, էջ 50-55, Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., ՀՍՍՀ ԳԱ Պատմ. ինստ հրատ., 1976, էջ 224-228, Գալոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Ե., «Հայաստան» հրատ., 1978, էջ 433-437:

[7] Տե՛ս Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905), Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970:

վախճանն էր»[1]: Այնինչ նշված օրենքն ուղղված էր ոչ միայն հայկական դպրոցների, այլև հայ ժողովրդի դեմ ընդհանրապես և այդ հարցում առաջնությունը տալ հայկական դպրոցների խնդրին ճիշտ չէ:

Հիմնախնդրին անդրադարձել է խորհրդահայ հետազոտող Խ. Բարսեղյանն իր հոդվածում[2]: Նա, տուրք տալով ամեն ինչում սոցիալ-դեմոկրատների դերակատարության ուռճացման խորհրդահայ պատմագրության ոչ ճիշտ մոտեցմանը, գրում է. «Դաշնակցության և մյուս կազմակերպությունների նացիոնալիստական ուղեգիծը ռեակցիոն էր և վնասաբեր: Հակացարական շարժումների ընթացքում հաղթեց սոցիալ-դեմոկրատիայի կիրառած դասակարգային ուղեգիծը՝ հայ ժողովրդի պայքարը համառուսական ռևոլյուցիոն շարժման միակցելու ուղեգիծը և ոչ թե նրան հակադրելու նացիոնալ-շովինիստական մտայնությունն ու քաղաքականությունը»[3]: Հունիսի 12-ի օրենքի դեմ պայքարը նույն ոգով են մեկնաբանում Վ. Բարխուդարյանն ու Դ. Մուրադյանն իրենց համահեղինակած աշխատությունում. «1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ ելած հայ աշխատավորության ազգային ազատագրական շարժումը լիցք էր ստանում այն պայքարից, որ կովկասյան պրոլետարիատը մղում էր ինքնակալության և բուրժուազիայի դեմ»[4]: Հիշյալ մոտեցումը որևէ քննության չի դիմանում, քանզի հեղինակները փորձում են համատեղել անհամատեղելին՝ ազգային եկեղեցապատկան գույքի համար մղվող համազգային պայքարը Բաքվի գործարաններում իրենց պայմանները բարելավելուն ուղղված աշխատավորների պայքարի հետ: Հիմնահարցի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում նաև Ա. Համբարյանի հոդվածը[5]:

Մ. Խրիմյան կաթողիկոսի՝ հունիսի 12-ի օրենքի դեմ ձեռնարկած քայլերը, ինչպես նաև հակացարական ելույթները, ապա նաև 1905 թ. օգոստոսի 1-ի նոր հրամանագիրն իր մենագրությունում ներկայացնում է Հ. Աճեմյանը[6]:

Հետխորհրդային շրջանում ևս հայ հետազոտողներն իրենց աշխատություններում անդրադարձել են հիմնախդրին: Թեմայի լուսաբանման համար օգտագործվել է Է. Կոստանդյանի աշխատությունը[7]: Հատկապես կարևորում ենք հունիսի 12-ի օրենքի դեմ Մ. Խրիմյանի ձեռնարկած քայլերի լուսաբանման հատվածները[8]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 240:

[2] Տե՛ս Բարսեղյան Խ., Մի էջ հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1964, N 3, էջ 93-105:

[3] Նույն տեղում, էջ 103-104:

[4] Տե՛ս Բարխուդարյան Վ., Մուրադյան Դ., Հայաստանի աշխատավորները ցարիզմի դեմ մղված համաժողովրդական պայքարում, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե. 1988, էջ 44:

[5] Տե՛ս Համբարյան Ա., Հայոց եկեղեցական բռնագրաված գույքի օգտագործումը ցարիզմի կողմից 1903-1905 թթ., Ե., Հայկական ՍՍՌ ԳԱ տեղեկագիր, 1961, N 10, էջ 77-86:

[6] Տե՛ս Աճէմեան Հ., Հայոց Հայրիկ, Թավրիզ, տպ. Ատրպատականի հայոց թեմական, 1929:

[7] Տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, Հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., «Զանգակ 97» հրատ., 2000:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 406-416:

Հիմնահարցի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում նաև Է. Կոստանդյանի հոդվածը[1]:

Հետխորհրդային հետազոտող Ա. Ներսիսյանը հիմնահարցին անդրադարձել է իր երկու աշխատություններում[2]: Ա. Ներսիսյանն իրատեսորեն է գնահատում Ռուսաստանի քաղաքականությունը և այդ համատեքստում ՀՅԴ՝ հակացարական պայքարի մեջ մտնելը: Ճիշտ է նրա այն դիտարկումը, թե. «Ռուսաստանին երբեք ձեռնտու չէր հայոց ոչ միայն պետութեան գոյութիւնը, այլեւ՝ հայոց եկեղեցու, որը հայ մշակութային կեանքի զարգացմանը յետամուտ կառոյց էր: Նա ձգտում էր ոչ թէ հայոց զարթօնքին, այլ ռուսացմանը»[3]: Հիմնախնդրին, մասնավորապես ջավախահայության հակացարական պայքարին, իր մենագրության մեջ անդրադարձել է Ա. Մելքոնյանը[4]:

1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ Հնչակյան կուսակցության ծավալած հակացարական պայքարին անդրադարձել է հետխորհրդային հետազոտող Գ. Հովհաննիսյանն իր աշխատությունում[5]: Հիմնախնդրին անդրադարձել է հետազոտող Վ. Թունյանն իր աշխատությունում[6]: Վ. Թունյանը փաստում է, որ «Այն սահմանափակում էր թեմական եկեղեցիների և ծխական համայնքների իրավասությունները, փակում էր հոգևոր դպրոցները՝ զրկելով վերջիններիս գոյության միջոցներից, կրճատում էր նվիրատվություններ ստանալու հնարավորությունը»[7]:

Թեմայի վերաբերյալ արդի հայ պատմագրության մոտեցումներն արտացոլված են ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի կողմից վերջերս հրատարակված «Հայոց պատմություն» բազմահատորյակի երրորդ հատորի երկրորդ գրքում[8], որտեղ հիմնահարցը հիմնականում օբյեկտիվորեն է լուսաբանված: Բայց որոշակի վերապահումով ենք մոտենում այն թեզին, ըստ որի «… Հայաստանյաց եկեղեցու զույքի բռնագրավման ծրագիրը … կառավարչապետ Գ. Գոլիցինի՝ հայ ժողովրդի դեմ ուղղված հերթական սադրանքն էր»[9]:

Ամփոփելով վերը շարադրվածը, կարող ենք փաստել, որ հայ պատմագրության մեջ թեմայի շուրջ մինչ օրս չի ձևավորվել միասնական մոտեցում:

---

[1] Տե՛ս Կոստանդեան Է., 1903 թ. Յունիսի 12-ի ցարական կառավարութեան՝ հայ եկեղեցու շարժական և անշարժ գոյքի բռնագրաւման օրէնքը և համաժողովրդական ընդվզումը, «Վարագ», թիւ 50, 2003, էջ 60-68:

[2] Տե՛ս Ներսիսեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. Բ, Բեյրութ, Զավարեան մատենաշար, 2008: Նույնի՝ Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), Ե., Իրան. կովկ. կենտ., 2003:

[3] Տե՛ս Ներսիսեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. Բ, Բեյրութ, Զավարեան մատենաշար, 2008, էջ 214:

[4] Տե՛ս Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., «Զանգակ-97» հրատ., 2003:

[5] Տե՛ս Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն, Ե., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2012:

[6] Տե՛ս Тунян В., Патриаршество Хримяна Айрика, св. Эчмиадзина, 2013.

[7] Նույն տեղում, էջ 438:

[8] Տե՛ս Հայոց պատմություն, հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918), գիրք երկրորդ (1901-1918), Ե., 2015:

[9] Նույն տեղում, էջ 12:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդում: Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները հրապարակվել են վեց հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է 193 էջ:

Ներածության մեջ տրված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունը, ժամանակագրական շրջանակը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, աղբյուրագիտական հենքը և ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին գլխում՝ **«Օրենքի ընդունման պատճառները և դրա առաջին արձագանքները հայ իրականության մեջ»**, ներկայացված է ցարական իշխանությունների՝ հայ ժողովրդի հանդեպ իրականացրած քաղաքականությունը օրենքին նախորդած ժամանակահատվածում: Վերլուծված փաստերն ապացուցում են, որ հունիսի 12-ի հրամանագրի ի հայտ գալը անսպասելի չի եղել և հայոց եկեղեցապատկան կալվածքների բռնագրավման խնդիրը թե՛ Պետերբուրգում, թե՛ Թիֆլիսում քննարկան առարկա էր արդեն XIX դարի 80-ական թվականներին: Օրենքի ընդունման պատճառները վերլուծելով, եկել ենք այն հետևության, որ դրա գլխավոր նպատակը հայ ժողովրդին բաժան-բաժան անելու, իր եկեղեցուց օտարացնելու, ազգային գիտակցության կորստի, ուղղափառության գիրկը նետելու և անդեմ հանրություն դարձնելու ցանկությունն էր:

Ամբողջությամբ ներկայացված է օրենքը, նրա հակահիրավական բնույթը, օրենքի և նրա կիրառման կարգի միջև եղած անհամապատասխանությունները, հայ իրականության մեջ նրա ունեցած առաջին արձագանքները:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ **«Հայոց եկեղեցու և հայ քաղաքական կուսակցությունների պայքարը հունիսի 12-ի օրենքի դեմ»**, ներկայացված է հայոց եկեղեցու դիրքորոշումն օրենքի նկատմամբ: Կատարած վերլուծությունների արդյունքում ապացուցել ենք, որ հայոց եկեղեցին իր հայրապետով, պատրիարքներով, թեմակալ առաջնորդներով և շարքային հոգևորականներով միակամ էր հունիսի 12-ի օրենքի դեմ պայքարում ու այդ պայքարը շարունակեց մինչև 1905 թ. օգոստոսի 1-ի նոր հրամանագրի ընդունումը:

Ներկայացված է հայ ազգային կուսակցություններից ՀՅԴ-ի դիրքորոշումն օրենքի նկատմամբ և նրա ձեռնարկած քայլերն այն չեղարկելու համար: Այդ համատեքստում առաջին հերթին վերլուծված է «Ինքնապաշտպանության կոմիտե» կազմակերպության՝ որպես հակացարական պայքարի համակարգող ուժի, ծագման և նրանում ՀՅԴ-ի խաղացած դերի հարցերը: Վերլուծել ենք նաև ՀՅԴ-ի՝ հակացարական պայքարում ունեցած դերի շուրջ տարբեր ժամանակաշրջանների հետազոտողների արտահայտած տեսակետները՝ գալով մի շարք հետևությունների:

Վերլուծել ենք նաև հնչակյանների և հայ սոցիալ-դեմոկրատների դերն օրենքի դեմ պայքարում՝ կատարելով մի շարք հետևություններ:

Վերլուծելով Սոցիալ-դեմոկրատների վերաբերմունքն ընդունված օրենքի նկատմամբ, կատարվել են մի շարք հետևություններ:

Ատենախոսության երրորդ գլխում **«Հակացարական ելույթներն Արևելյան Հայաստանում և Կովկասում: 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագիրը»**, ներկայացված են Արևելյան Հայաստանում, ապա Կովկասի հայաբնակ և հայաշատ բնակավայրերում տեղի ունեցած հակացարական ելույթները: Վերլուծելով 1903 թ. Արևելյան Հայաստանում և Կովկասի հայաբնակ և հայաշատ բնակավայրերում տեղի ունեցած հակացարական ելույթների թեման, կատարել ենք մի շարք հետևություններ:

Ներկայացված է նաև 1903-1905 թթ. հայ ժողովրդի ցուցաբերած հակացարական պայքարի այլ ձևերը: Մեջբերված փաստերն ի մի բերելով՝ կատարել ենք որոշ եզրակացություններ.

Վերլուծել ենք նաև 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագիրն ու վերջինիս ունեցած արձագանքները՝ կատարելով մի շարք եզրակացություններ:

Վերլուծել ենք նաև հիմնահարցի արտացոլումը հայ մամուլի էջերում թեման: Քննության առնելով թեման, կատարելով մի շարք հետևություններ:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ամփոփվել են ատենախոսությունում կատարված ուսումնասիրության արդյունքները.

1. Եկեղեցապատկան կալվածքների և գույքի բռնագրավումը ցարական կառավարությունը դիտում էր ոչ որպես նպատակ, այլ որպես միջոց, որի օգնությամբ հնարավոր կլիներ իրագործել հայ ժողովրդի ձուլումը: Հարվածելով հայոց եկեղեցուն, որն ըստ կառավարության նպաստում էր ազգայնական հակումներին հայ ժողովրդի մեջ, կառավարությունը ցանկանում էր զսպել հոգևորականությանը, որը կառավարության կարծիքով ներկայանում էր իբրև Մեծ և միացյալ Հայաստանի վերականգնման քարոզիչ:

2. Հունիսի 12-ի օրենքով կառավարությունը սեպ էր խրում հայ եկեղեցու և դրսի հայության միջև: Դրա լուծումը գտնված էր հունիսի 12-ի հրամանագրով, քանզի հայ եկեղեցուն արված նվիրատվությունները ևս պետք է հանձնվեին պետությանը: Հայոց եկեղեցուն զրկելով ֆինանսական միջոցներից, կառավարությունը հայ հոգևորականությանը փորձում էր դարձնել պետական աշխատավարձ ստացող ծառայող՝ դրանով ցանկանալով սեպ խրել բարձր ու ստորին հոգևորականության մեջ և բացառել նրանց՝ որևէ հարցում միավորվելու հնարավորությունը:

3. Ֆինանսական ակնկալվող հոսքերը, որը կառավարությունը կարող էր ստանալ եկեղեցապատկան գույքի բռնագրավումից, չարդարացան: Պատահական չէ, որ եկեղեցապատկան գույքի բռնագրավման քննարկումների ժամանակ Ռուսաստանի ֆինանսների նախարար Ս. Վիտտեն առաջինն էր ընդդիմանում, ինչն ապացուցում է, որ այն ֆինանսական տեսակետից անարդյունավետ էր լինելու:

4. Հայոց եկեղեցին իր հայրապետով, պատրիարքներով, թեմակալ առաջնորդներով և շարքային հոգևորականներով, ինչպես նաև բովանդակ հայ ժողովուրդն իր աշխարհասփյուռ համայնքներով միակամ էր 1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ տարվող պայքարում և շարունակեց օրենքի կիրառման դեմ պայքարը մինչև 1905 թ. օգոստոսի 1-ի նոր հրամանագրի ընդունումը:

5. ՀՅԴ-ն գնաց երկրորդ՝ ցարական Ռուսաստանի դեմ, ճակատի բացմանը, ինչը թելադրված էր հայության հանդեպ ցարական կառավարության գաղութային քաղաքականության ուժգնացմամբ, որն արտահայտվեց հունիսի 12-ի օրենքով: Նրա՝ այդ պայքարում խաղացած առաջատար դերը, բոլորն են ընդունում: ՀՅԴ-ն հաջողության հասնելու համար ընդունելի էր

համարում պայքարի տարբեր ձևերի՝ ցույցերի, ահաբեկչական գործողությունների, զինված դիմադրության, գրավոր ու բանավոր քարոզչության և այլ միջոցների համադրումը:

6. Ինքնապաշտպանության կոմիտեն սկզբնապես պատմական պահի ազդեցությամբ ստեղծված կառույց էր: Նրա հետագա գործունեության մեջ մեծ դերակատարություն ստանձնեց ՀՅԴ-ն, որը, լինելով համախմբված կառույց, հակացարական պայքարում միավորողի դեր ստանձնեց: Դա նպաստեց հակացարական պայքարի արդյունավետության բարձրացմանը:

7. Հնչակյան կուսակցությունը, լինելով ազգային կուսակցություն, անմասն չմնաց հունիսի 12-ի օրենքի դեմ հայ ժողովրդի մղած պայքարին: Հնչակյանները մասնակցություն ունեցան Ինքնապաշտպանության կոմիտեին: Նրանք կազմակերպեցին և իրագործեցին հունիսի 12-ի օրենքի հիմնական նախաձեռնողներից մեկի՝ Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինի մահափորձը: Դրանից հետո նրանք կազմակերպեցին ևս մի քանի ահակեբումներ: Հնչակյաններն իրենց մասնակցությունը բերեցին հակացարական ելույթներին և, բացի այդ, քարոզչական պայքար մղեցին ցարական իշխանությունների դեմ:

8. Սոցիալ-դեմոկրատները ևս անմասն չմնացին հակացարական պայքարում: Թեև սոցիալ-դեմոկրատներն ուզում էին հակացարական պայքարում երևալ որպես առաջամարտիկներ, բայց պատմական փաստերն ապացուցում են, որ նրանք ամենևին էլ չեն գլխավորել հակացարական պայքարը, ոչ էլ դրանում ունեցել ծանրակշիռ դերակատարում: Սոցիալ-դեմոկրատները ցանկանում էին հակացարական պայքարին տալ զուտ դասակարգային բնույթ, ինչն անընդունելի է բոլոր առումներով: Բնական է, որ ազգի դեմ ուղղված այս օրենքը պետք է ժողովրդին հաներ համազգային պայքարի և այստեղ խոսել դասակարգային պայքարի մասին անտրամաբանական է:

9. Արևելյան Հայաստանում տեղի ունեցած հակացարական ելույթները հայ ժողովրդի կողմից ռուսական ցարիզմին ցույց տված առաջին լուրջ դիմադրության օրինակներն էին՝ սկսած Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու ժամանակից: Դիմադրության այդ օրինակներով հայ ժողովուրդն ապացուցեց, որ կարող է պայքարել իր շահերի համար և այդ հարցում միակամ է: Ցարական իշխանություններն իրենց գործողություններով ապացուցեցին, որ իրենց ծրագրերն իրագործելու համար ոչնչի առջև կանգ չեն առնելու: Դրանց արդյունքը եղան հայ ազգի տված բազում զոհերը, վիրավորները, բանտարկվածներն ու աքսորվածները: Հայ ժողովուրդը դիմադրություն ցույց տվեց նաև Կովկասի հայաբնակ ու հայաշատ բազմաթիվ վայրերում: Այդ վայրերի հակացարական ելույթների յուրահատկությունն այն էր, որ, թեև հայերն այդտեղ ոչ բոլոր բնակավայրերում էին կազմում բնակչության գերակշիռ մասը, այնուհանդերձ, ապրելով այլ ազգերի կողքին, նրանք չէին կորցրել ազգային ինքնագիտակցությունը և պաշտպանեցին սեփական ազգի իրավունքները:

10. Հակացարական ելույթներից բացի, 1903-1905 թթ. ընթացքում հակացարական պայքարն ընդունեց նաև այլ ձևեր: Դրանք տարվում էին երկու ուղղությամբ. առաջին՝ ցարական պաշտոնյաների, իշխանությունների հետ համագործակցող հայերի և այլազգիների ահաբեկումներով և երկրորդ՝ հրամանագրի դեմ պայքարի տնտեսական ճանապարհը, որը կրում էր համեմատաբար խաղաղ բնույթ. ժողովուրդը չէր վարձակալում հողերը, չէր գնում բռնագրավված մուլքը, տեղափոխելուց վնասում էր այն, որ չհասնի պետական պահեստները և այլն:

11. 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագիրը հայ ժողովրդին մատուցած նվեր չէր: Հրամանագրի ընդունումը պայմանավորված էր նախ և առաջ հայ ժողովրդի ցույց տված միասնական պայքարով: Դրանում որոշակի դեր ունեցավ նաև տնտեսական գործոնը, քանզի եկեղեցապատկան գույքի՝ պետության կողմից կառավարման ընթացքում զգալիորեն կրճատվեցին հավաքագրվող եկամուտները: Հրամանագրի ընդունման գործում կարևոր դեր ունեցան նաև Ռուսաստանի արտաքին քաղաքական ձախողումները, մասնավորապես ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությունը, ներքին քաղաքական կյանքում ծագած խնդիրները, նախ և առաջ սկսված Առաջին ռուսական հեղափոխությունը:

12. Եթե 1903 թ. հունիսի 12-ի օրենքով ցարական կառավարությունը նպատակ էր դրել ջլատել հայ եկեղեցու և ժողովրդի ուժերը, անջրպետ ստեղծել եկեղեցի-ժողովուրդ հարաբերություններում, ստացվեց հակառակ արդյունքը: Հայ ժողովուրդը համախմբվեց իր եկեղեցու շուրջը՝ քաջ գիտակցելով, որ պաշտպանելով եկեղեցու իրավունքները, դրանով նաև պաշտպանում է իր իրավունքները:

Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրատարակումները.

1. Հայոց եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքի ընդունման պատճառները, «Էջմիածին», 2007, թիվ Ը:
2. Հայոց եկեղեցու դիրքորոշումը 1903 թ. հունիսի 12-ի օրենքի նկատմամբ, «Էջմիածին», 2014, թիվ Ե:
3. 1903 թ. հունիսի 12-ի Հայոց եկեղեցու գույքի և կալվածքների բռնագրավման մասին օրենքը, նրա առաջին արձագանքները հայ իրականության մեջ, «Պատմություն և մշակույթ», Երևան, 2014:
4. Հակացարական ելույթները Կովկասի հայաշատ բնակավայրերում 1903 թվականին, «Ակունք», Երևան, 2016, թիվ 1(13):
5. Հակացարական ելույթներն Արևելյան Հայաստանում 1903 թվականին, «Կանթեղ>>, Երևան, 2016, թիվ 3(68):
6. 1903 թ. հունիսի 12-ի օրենքի ընդունման և կիրառման հիմնահարցի արտացոլումը արևելահայ մամուլում, «Ակունք», Երևան, 2018, թիվ 1(18):

ДАНИЕЛЯН МКРТИЧ ВАНИКОВИЧ

ЗАКОН ОТ 12-ОГО ИЮНЯ И АНТИЦАРСКИЕ ВЫСТУПЛЕНИИ АРМЯН 1903-1905 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».
Защита состоится 16-ого декабря 2022 г. в 14^{00} часов, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена указу Николая II от 12 июня 1903 года, которым царское правительство конфисковало армянское церковное имущество и капиталы.

Диссертация состоит из введения, трех глав с соответствующими подглавами, заключения, использованных источников и списка литературы.

Во введении обосновывается актуальность темы, ее цель и задачи, методология, хронологические рамки, научная новизна и практическая значимость, источниковое обнова и степень изученности:

В первой главе диссертации «Причины принятия закона и его первые отзывы в армянской действительности» представлена политика, проводившаяся царскими властями по отношению к армянскому народу в период, предшествующий закону. Анализируемые факты доказывают, что появление указа от 12 июня не было неожиданным и вопрос о конфискации армянских церковных имений был предметом обсуждения как в Петербурге, так и в Тифлисе уже в 80-х годах XIX века. Анализируя причины принятия закона, мы пришли к выводу, что основной его целью было стремление разделить армянский народ, отдалить его от своей церкви, утратить национальное самосознание, бросить его в объятия Православия и превратить в безликое общество. Полностью представлен закон, его незаконный характер, противоречия между законом и порядком его применения, данные об имуществе принадлежащий армянской церковей, а затем и первые реакции, которые он имел в армянской действительности.

Во второй главе: «Борьба Армянской церкви и армянских политических парти против закона от 12 июня», сначала представлена позиция Армянской церкви относительно закона. Мы доказали, что Армянская Церковь со своим католикосом, патриархами, епархиальными руководителями и рядовым духовенством была едина в борьбе против закона 12 июня и продолжала эту борьбу до принятие нового указа 1 августа 1905 года.

Среди армянских национальных партий анализируется позиция АРФ (Дашнакцутюн), Гнчаков, затем армянских социал-демократов по отношению к закону и предпринятым ими шагам по его отмене. Мы доказали, что АРФ завоевала большое доверие армянского народа в борьбе за отмену закона 12 июня, и ее вклад в организацию и руководство этой борьбой был велик. Партия Гнчак, будучи национальной партией, не осталась без участия в борьбе армянского народа против закона 12 июня. Гнчаки организовали и реализовали покушение на одного из главных инициаторов закона 12 июня, наместника Кавказа Г. Голицына. Гнчаки также принимали участие в позже случивших террорах. Гнчаки также вели пропагандистскую борьбу против царской власти.

Анализируется вопрос о роли армянских социал-демократов в антицарской борьбе. Социал-демократы не остались в стороне от антицарской борьбы. Несмотря на высказанное в их обращениях мнение, что они «вызвали к жизни» людей, вышедших на антицарской борьбы, на деле все обстоит

совсем иначе. При этом социал-демократы хотели выступить пионерами антицарской борьбы, но исторические факты доказывают, что они вовсе не руководили антицарской борьбой или играли в ней значительную роль. Несмотря на нереалистичные и устаревшие взгляды в своих оценках, социал-демократы признавали необходимость антицарской борьбы.

В третьей главе «Антицарские выступления в Восточной Армении и на Кавказе. Указ от 1 августа 1905 года» анализируются антицарские выступления, имевшие место в Восточной Армении, затем в армянонаселенных и преимущественноармянских поселениях на Кавказе. Эти выступления были примерами первого серьезного сопротивления армянского народа российским властям, начиная со времени присоединения Восточной Армении к России. Этими примерами сопротивления армянский народ доказал, что он еще может бороться, чтобы защитить свои интересы. Царское правительство своими действиями доказало, что оно не остановится ни перед чем для осуществления своих планов, результатом которых стали многочисленные жертвы, раненые, заключенные в тюрьмы и изгнанные представители армянского народа. Особенность антицарских выступлений на Кавказе заключалась в том, что армяне составляли там большинства населения не во всех населенных пунктах, но, живя вместе с другими народами, не теряли национального самосознания и отстаивали права собственной нации.Анализируется также вопрос о других формах антицарской борьбы, проявленных армянским народом в 1903-1905 гг.В 1903-1905 годах антицарская борьба была направлена также против чиновников разного ранга, желавших конфисковать церковное имущество, и пытавшихся их поддержать армян. Народ боролся и экономическими средствами: не брал землю в аренду, не покупал конфискованное имущество, портил его при транспортировке так, что оно не попало на казенные склады. Анализируется также указ от 1 августа 1905 г. и его реакции. Указ был не подарком армянскому народу, а следствием постоянной борьбы армянского народа. Наместник Кавказа И. Воронцов-Дашков обвинил голицынский режим в принятии указа от 12 июня 1903 г., пытавшегося удержать армянский народ от недоверия новым русским центральным и местным властям. Важную роль в принятии указа сыграли внешнеполитические неудачи России, особенно поражение в русско-японской войне и проблемы, возникшие во внутриполитической жизни, прежде всего первая русская революция и вынужденные реформы правительства.

Также анализируется тема отражения вопроса на страницах армянской прессы. Исталкованные нами органы восточноармянской печати («Мшак», «Мурч», «Нор-Дар») рассматривали вопрос о принятии и применении указа от 12 июня 1903 г., а затем и его отмены в той мере, в какой это допускала царская цензура.

Также через газеты зарубежные армяне объединились в вопросе об отмене закона 12 июня и боролись всеми возможными средствами. В разделе «Заключение» подводятся итоги исследования, проведенного в диссертации.

MKRTICH VANIK DANIELYAN

LAW OF JUNE 12 AND ARMENIANS' ANTI-TSARIST SPEECH IN 1903-1905

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of
"History of Armenia" 07.00.01.

The Defense of the Disseration will be held on December 16, 2022, at 14^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institue of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

The dissertation is dedicated to the decree approved by Nicholas II on June 12, 1903, by which the tsarist government confiscated Armenian ecclesiastical property and coins.

The dissertation consists of an introduction, three chapters with corresponding subchapters, conclusions, used sources and bibliography.

The introduction substantiates the relevance of the topic, its purpose and objectives, methodology, chronological framework, scientific novelty and practical significance, source-based support and degree of study.

The first chapter of the dissertation, "Reasons for the adoption of the law and its first reactions in the Armenian reality", presents the policy implemented by the tsarist authorities towards the Armenian people in the period preceding the law. The analyzed facts prove that the appearance of the decree of June 12 was not unexpected and the issue of confiscation of Armenian church estates was a subject of discussion both in Petersburg and in Tiflis already in the 80s of the XIX century. Analyzing the reasons for the adoption of the law, we came to the conclusion that its main purpose was the desire to divide the Armenian people, alienate them from their church, lose their national identity, throw them into the arms of Orthodoxy and turn them into a faceless society. The law is fully presented, its illegal nature, the inconsistencies between the law and the order of its application, the data about the property of Armenian churchmen, and then the first reactions it had in the Armenian reality.

In the second chapter: «The Struggle of the Armenian Church and Armenian Political Parties against the law of June 12, first the position of the Armenian Church regarding the law is presented». We have proven that the Armenian Church with its cathilocos, patriarchs, diocesan leaders and ordinary clergy was united in the struggle against the law of June 12 and continued this struggle until the adoption of the new decree of August 1, 1905.

Among the Armenian national parties, the position of the ARF (Dashnaktsutyun) and Hnchak, then the Armenian Social-Democrats, towards the law and the steps taken by them to cancel it are analyzed. We have proven that the ARF gained a lot of trust among the Armenian people in the struggle for the cancellation of the law of June 12 and its contribution to the organization and direction of the struggle was great. In order to achieve success, the ARF accepted the legitimacy of various forms of struggle: demonstrations, terrorist acts, armed resistance, written and oral propaganda.

The Hnchak party, being a national party, did not remain without participation in the struggle of the Armenian people against the law of June 12. The Hnchaks organized and implemented the assassination attempt of one of the main initiators of the law of June 12, Governor of the Caucasus G. Golitsyn, by which

the tsarist authorities were forced to reckon with the Armenian people. Hnchaks also took part in the subsequent intimidation. The Hnchaks also waged a propaganda struggle against the tsarist authorities.

The question of the role played by the Armenian social-democrats in the anti-tsarist struggle is analyzed. The social democrats did not remain unparticipated in the anti-tsarist struggle. Despite the opinion expressed in their appeals that they "called to life" the people who came out of the anti-tsarist struggle, the reality is completely different. With this, the social democrats wanted to appear as pioneers in the anti-tsarist struggle, but historical facts prove that they did not lead the anti-tsarist struggle at all or had a significant role in it. Despite the unrealistic and outdated views in their assessments, the social democrats recognized the need for an anti-tsarist struggle. Although their struggle was sometimes limited to appeals and leaflets, they were an integral part of that struggle.

In the third chapter, "Oppositional Speeches in Eastern Armenia and the Caucasus." The decree of August 1, 1905», the anti-tsarist speeches that took place in Eastern Armenia, then in the Armenian-inhabited and Armenian-dominated settlements in the Caucasus are analyzed. Those speeches were examples of the first serious resistance of the Armenian people to the Russian authorities, starting from the time of joining Eastern Armenia to Russia. With those examples of resistance, the Armenian people proved that they can still fight to protect their interests. The tsarist government proved by its actions that it will stop at nothing to implement its plans, the result of which were the many victims, wounded, imprisoned and exiled people of the Armenian nation. The peculiarity of the anti-tsarist protests in the Caucasus was that the Armenians did not make up the majority of the population there in all settlements, but, living together with other peoples, did not lose their national identity and defended the rights of their own nation.

The issue of other forms of anti-tsarist struggle demonstrated by the Armenian people in 1903-1905 is also analyzed. During the years 1903-1905, the anti-tsarist struggle was also directed against the officials of various ranks who wanted to confiscate church property and the Armenians who tried to support them. The people also fought with economic means: they did not rent the land, did not buy the confiscated property, damaged it during transportation so that it did not reach the government warehouses.

The decree of August 1, 1905 and its reactions are also analyzed. The decree was not a gift to the Armenian people, but a consequence of the continuous struggle of the Armenian people. Viceroy of the Caucasus I. Vorontsov-Dashkov blamed the passing of the decree of June 12, 1903 on the Golitsyn regime, trying to keep the Armenian people from distrusting the new Russian central and local government. Russia's foreign policy failures, particularly the defeat in the Russo-Japanese war and the problems arising in domestic political life, first of all the first Russian revolution and the forced reforms of the government played an important role in the adoption of the decree.

The topic of the reflection of the issue on the pages of the Armenian press is also analyzed. The organs of the Eastern Armenian press that we interpreted (“Mshak”, “Murch”, “Nor-Dar”) considered the issue of adopting and applying the decree of June 12, 1903, and then canceling it to the extent that this was allowed by the tsarist censorship. Also, thanks to them, the Eastern Armenians received more or less complete information about the events that took place during the adoption, application and cancellation of the decree. The Western Armenian press and the Armenian newspapers published in the settlements were independent in their publications and were not subject to tsarist censorship, and this provided an opportunity for an objective presentation of the issue. It was also through the newspapers that the Armenians abroad united regarding the cancellation of the June 12 law and fought with all possible means. In the "Conclusions" section, the results of the research carried out in the dissertation were summarized.